ՕՐԲԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

	ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ
1	«Անանիա Շիրակացու խնդիրներն ու հարցումները»	Բաց դաս-միջոցառում մաթեմատիկա առարկայից՝ նվիրված Շիրակացու խնդիրներին: Կրթական ծրագիրն իրականացվում է 6-9-րդ դասարանների աշակերտների համար:
2	«Գեղեցկության, լույսի, պայքարի ու սիրո բանաստեղծը»	Բաց դաս-միջոցառում՝ գրականություն առարկայից՝ նվիրված Պարույր Սևակին: Կրթական ծրագիրն իրականացվում է 9-12-րդ դասարանների աշակերտների համար:
3	«Ֆրանսիայի թանգարանները»	Բաց դաս-միջոցառում՝ ֆրանսերեն առարկայից: Կրթական ծրագիրն իրականացվում է 8-9-րդ դասարանների աշակերտների համար:
4	«Ի. Պավլով: Պայմանական ռեֆլեքսներ»	Բաց դաս-միջոցառում՝ կենսաբանություն առարկայից: Կրթական ծրագիրն իրականացվում է 8-9-րդ դասարանների աշակերտների համար:
5	«Դեպի Անի»	Բաց դաս-միջոցառում պատմություն առարկայից: Կրթական ծրագիրն իրականացվում է 7-9-րդ դասարանների աշակերտների համար:

6	«Պատանի Շլիման»	Կրթական ծրագիրն իրականացվում է 7-9-րդ դասարանների աշակերտների համար:
7	Հովսեփ Օրբելին և «Միջնադարյան Հայաստանի առակները», Վարդան Այգեկցի, Մխիթար Գոշ	Բաց դաս-միջոցառում՝ գրականություն առարկայից: Կրթական ծրագիրն իրականացվում է 7-9-րդ դասարանների աշակերտների համար:
9	«Լևոն Օրբելին հայ ֆիզիոլոգների դպրոցի հիմնադիր»	Դասախոսություն: Կրթական ծրագիրն իրականացվում է բժշկական ուսումնական հաստատությունների 1-2րդ կուրսերի ուսանողների համար:
10	«Հայկական լեռնաշխարհ»	Բաց դաս-միջոցառում՝ աշխարհագրություն առարկայից: Կրթական ծրագիրն իրականացվում է 9-րդ դասարանի աշակերտների համար:
11	«Մայիսյան հերոսամարտերը և դրանց նշանակությունը»	Բաց դաս-միջոցառում՝ պատմություն առարկայից: Կրթական ծրագիրն իրականացվում է 9-11-րդ դասարանների աշակերտների համար:
12	«Հովսեփ Օրբելին հնագետ»	Կրթական ծրագիրն իրականացվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ: Ծրագիրն անցկացվում է 9-10-րդ դասարանների աշակերտների համար:
13	«Հովսեփ Օրբելին և «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը»	Բաց դաս-միջոցառում՝ գրականություն առարկայից: Կրթական ծրագիրն իրականացվում է 6-9-րդ դասարանների աշակերտների համար:

14	«Հովսեփ Օրբելին գիտության կազմակերպիչ»	Կրթական ծրագիրն իրականացվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ: Կրթական ծրագիրը նախատեսված է ուսանողների համար:
15	«Հովսեփ Օրբելին թանգարանագետ»	Կրթական ծրագիրն իրականացվում է Մանկավարժական համալսարանի ուսանողների համար:
16	«Արցախյան ազատագրական պայքարը և նրա նշանակությունը»	Դասախոսություն: Կրթական ծրագիրն իրականացվում է պատմություն առարկայի շրջանակում 7-11-րդ դասարանների աշակերտների համար:
17	Օրբելի եղբայրների տուն-թանգարանի դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում: «Օրբելիների ընտանիքի նամակագրությունը»	Դաս-միջոցառումն անցկացվում է 7-9-րդ դասարանների աշակերտների համար:
18	«Հովսեփ Օրբելին և հայ մշակութային ժառանգությունը»	Ուսանողական գիտաժողով: Իրականացվում է ԵՊՀ մշակութաբանության ֆակուլտետի ուսանողների համար:
19	«Էրմիտաժի սխրանքը»	Կրթական ծրագիրն իրականացվում է պատմություն առարկայի շրջանակում 7-9-րդ դասարանների աշակերտների համար:
20	«Ջրասուզակային գործի պատմություն»	Կրթական ծրագիրն իրականացվում է Ճգնաժամային կառավարման ակադեմիայի մասնագետների հետ, նախատեսված է 5-7-րդ դասարանների աշակերտների համար:

21	Ինտերակտիվ, ինտելեկտուալ խաղ «Փոքրիկ Շլիման»	Խաղը համալրում է թանգարանի մշտական ցուցադրությունը և ներկայացնում Հովսեփ Օրբելու պեղումների ընթացքը Անիում, Վանում, Ամբերդում:
22	«Էրմիտաժի գանձերի փրկությունը» մուլտիմեդիա ցուցադրություն	Նոր տեխնոլոգիաների միջոցով աշակերտները ծանոթանում են Էրմիտաժի կենսագրության համար շրջադարձային համարվող դրվագին և տեղեկանում, թե ինչպես Հովսեփ Օրբելու՝ Ստալինին ուղղված նամակի շնորհիվ կանխվեց Էրմիտաժի գանձերի վաճառքը, ինչին դեմ էր ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:
23	«Նրանք երեքն էին» անիմացիոն ֆիլմ	Թանգարանն ունի նոր կրթական ծրագիր՝ նախատեսված նախադպրոցական տարիքի երեխաների համար՝ «Նրանք երեքն էին» անիմացիոն ֆիլմը: Փոքրիկները ֆիլմի միջոցով ծանոթանում են աշխարհահռչակ գիտնականների կյանքին և գիտական ուղուն: